ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՓԱՐԻԶՈՒ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԷՍՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ *սրահը աւարտելէ յետոյ այցելուն կ՚անցնի օտար ազգաց մասնական ցոյցքը տեսնելու։ Սոյնք գեղարուեստից տաճարին կից՝ իրարու կը յաջորդին մեծամեծ սրահներով. այլք աւելի ընդարձակ են յատուկ ճարտարապետութեամբ և ճոխութեամբ ձեռակերտաց մէջ զետեղուիլ, պանծալով իրենց ցցունազարդ վառ դրօշակօք։*

Ըստ Գաղղիականին հռչակաւորագոյն ցոյցն Անգլիոյ և իւր գաղթականութեանց հանդէսն է. նորա գրաւած տեղն 227,670 անգլիական ոտք հողագետին է։ Հազար վեց հարիւր հոգիք իրենց ազգային արտադրութիւնքն և արուեստք ՚ի հանդէս բերած են աստանօր։ Բաց աստի Անգլիան մի մեծ տեղ գրաւած է Ազատական և Գեղեցիկ Արուեստից մասին մէջ, ուրանօր անուանի նկարք իւր դպրոցն և ոճը կը հռչակեն. իւր գործիներն՝ Մեքենայից սրահին մէջ նշանաւոր տեղ մ՚ունին, և ՚ի ծայրս Արսեան դաշտին առանձին շատրուանաց մէջ ՚ի ցոյց դրած է իւր փոխադրութեան և տեղափոխութեան ծառայող հզօր գործիներն, իւր երկաթուղիքն, և գաղթականութեանց մասնական հանդէսքն, զոր օրինակ Բարեյուսոյ գլխոյ, Նոր Զելանտիոյ և Վիկտորեայ։

Սակայն բուն անգլիական հանդէսն Գեղարուեստից սրահին մէջն է։ Զարդարանաց և զետեղման օրինակը պարզ է, լաւ ևս՝ անգլիական է. որով և այցելուն չուշանար որոշելու զԱնգլիան ուրիշ ազգերէն և մանաւանդ ՚ի գաղղիականէն։ Իւրաքանչիւր դրան վրայ անգլիական դրօշակաց խուրձ մի կը մտցընեն ՚ի սրահս՝ որոց պատերուն միակ զարդարանքն է՝ Եղիսաբէթ թագուհւոյն ժամանակի գունով որմաթուղթն։ Ճախճապակիք և ապակեղէնք Անգլիոյ նշանաւոր ցոյցերէն մին են. ՚ի մասնաւորի իւր հատուածեալ բիւրեղն, որով շինուած անօթքն առասպելական գին մ՚ունին. յետոյ կուգան բրդեղէն գործուածքն, զգեստեղէնքն, մոմեղէնք, զէնք, և տնական ամենայն կարևոր կազմածք, սկսեալ ՚ի կահ կարասեաց մինչև ածուխն՝ ա-

digitised by A.R.A.R.@

ունց հոտոյ և ծխոյ վառելու դիւրացուցիչ վանդակափեղկ երկաթը, որուն այնչափ հոգ ունի անգլիացին իւր comfortable home պարեբելու համար։ Արծաթեղէն գործուածքն աւելի ծանրակշիռ են քան թէ գեղեցիկ. կայ դրգալաց նշանաւոր հաւաքում՝ մը պատկանեալ Լոնտոնի ոսկերչաց միացեալ ընկերութեանն, որուն իւրաքանչիւր դրգալն սոյն արուեստի գլուխ գործոց կրնայ համարուիլ։ Աւելորդ իսկ է մի առ մի յիշեցնելն իւր երկաթեղինաց բիւրազգի գործուածքն, որով այնչափ հարուստ է այդ երկիրը. անցնինք Նոր Զելանտիոյ և Վիկտորեայ հանգիսից, որոց փայլելուչ սրահից որմունքն կը ներկայացունեն գաղթական կենաց պէսպէս տեսարանք, ինչպէս են այգեկութք, ոսկւոյ հանքաց աշխատութիւնքն, և այլն։ Ընդարձակ աշխարհացոյց տախտակ մի միջավայրն կը գրաւէ. որոյ մօտ՝ դրան կամար մի կայ ոսկեզօծ կղմինդրէ շինուած, և որուն տարածքը կը ցուցընէ ոսկեհան աշխատութեանց սկզբէն մինչև ցայժմ հաւաքեալ զուտ ոսկւոյ քանակութիւնն. անոր շուրջը զանազան դարանաց մէջ դրուած են ոսկւոյ, արծաթոյ, պղնձոյ և պէսպէս մետաղաց հաւաքում մի. և քիչ մ՚անդին բազմութիւն մը զմռսեալ թռչնոց, չորքոտանեաց, ցամաքեցուցեալ ծաղկանց և բուսոց, փայտից և այլ բազմաթիւ նիւթոց հաւաքում մը՝ ՚ի նշան Անգլիոյ գաղթականութեանց բարեբեր հարստութեան, և որոց գլխաւորն է Հնդկաստանն։

Վերջինս մասնաւոր շէնք մի կը գրաւէ Հնդիկ Պալատ անուամբ։ Այս պալատս երկու քառանկիւն թևերէ կը կազմուի, միջավայրն ունելով շրջապալոր սրահ մի։ Արտաքին երեսն պատշգամօք և կամարօք զարդարուած է, որ կարաւանատան երևոյթ կու տան. իւր շագանակագոյն կարմիր աղիւներն սպիտակ դրասանգօք և գծիւք զարդարուած են, և Հնդիկ ճարտարապետութիւնն իւր քմահաճոյ գծերը առատապէս վրան սփռած է. նորա գըմբեթազարդ լուսամուտքն՝ որ մեղմ լոյս կ՚իջեցնեն, Հնդիկ և տաճիկ տիրապետութեան խառն ոճ մի կ՚երևցնեն։ Տասնանկիւն է միջավայրի սրահն, յեցած սպիտակ սիւնակաց վրայ, որոց քանդակքն Լոնտոնի Kensington Թանգարանի օրինակաց վրայ յարմարցուցած նմանութիւն մի կը յօրինեն Ուիթալի աշտարակին որ ՚ի Տըլհի. սպիտակ կըճէ աղբիւր մը իւր նուրբ և վճիտ ցայտերը ստորակայ աւազանաց մէջ կը թափէ, զորս ծովային փիչաւք ՚ի վեր բռնած են. այս արձանքը անթուական հնութիւն մի ունին։ Այս աղբեր օրինակն ևս կը տեսնուի նոյնպէս ՚ի Kensington. առոր շուրջը Հընդիկ սրճարան մի կայ, ուր սպիտակազգեստ այլ սևամորթ տեղացիք՝ իրենց երկրին անուշաբոյր սուրճն և խմորեղէնք կը մատակարարեն այցելուաց, զանազան ափսէից վրայ ներկայացնելով ևս անանաս, և պէսպէս պտուղք, որ թերևս աւելի հաճոյատեսիլ են քան թէ համեղ, գոնեա Եւրոպացւոց ճաշակին համեմատ։ Քանի չափ ընիկ Հնդիկք աստ ՚ի տես բերած են իրենց աշխարհին ազնուագոյն բերքն և ձեռագործք, ՚ի մասնաւորի յիշենք փղոսկրէ քանդակքն, պղնձագործ անօթք, ազնիւ կերպասք և մետաքս, խնկեղէնք և գոհարք. մին ՚ի նշանաւոր հանդիսագրացն է Մասուրի մահարաճային։

Անգլիական դրօշակաւն զարդարուած ուրիշ շէնքերու մէջ հաւաքուած են երկրագործական և տնտեսական բերքն. արժանաւոր է դիտել Thomas Robinsonի և որդւոյն ջաղացքն, որոց նոր դրութեամբն ցորենը կը մանրուի, և հետզհետէ զտելով ազնիւ նաշիհ դարձած, պարկերու մէջ կ՚ամփոփուի ինքնաշարժ գործեօք. երկայարկ շէնք մ՚է այս ջաղացքս՝ արտաքսապէս փայլուն ընկուզի փայտով շինուած, և որոյ բաղադրեալ մեքենականութիւնն քան ձիոց ուժ ունեցող մայր գործւով մը կը դառնայ։ Մօտ անոր անգլիա-

digitised by A.R.A.R.@

կան կաթնատուն մը կայ, ուր որ Ակոտիոյ, Իրլանտիոյ և Ռուիչայրի կովերուն կաթովն կարագ և պանիր կը շինուի՝ նոյնպէս ինքնաշարժ գործեզք։

Անգլիոյ հանդիսին կից՝ Պելճիոյ ցոյցն է. որոյ տարածութիւնն է 13,000 քառակուսի մէտր. սոյն այս երկիրս ունի դարձեալ մասն մի՝ ի Գեղարուստից տաճարին իւր բաղմաթիւ նկարուքն և Մկրենոյից պալատան մէջ առաջնակարգ տեղութեանց մին է իւր գործեցց համար։ Երկու առանձին շէնքեր կը բովանդակեն. մին՝ անտառագիտութեան մեծ հանդէս մը, և միւսն՝ երկրաբանական բերքն և արդիւնքը. բաց աստի իր հետ միացուցած է իւր գաղթականութեանց Աֆրիկիոյ և Գանկոյին հանդէսքն, Նորա ցոյցին նշանաւոր նիւթոց մէջ յիշելի է ասղնեգործ բանուածքն, ի մանաւորի Մալին (Malines) քաղաքի, որոյ կենդանի աչխարհահանդիսին ներկայ գտանուեցանք անցեալ տարի այս օրերուս մէջ, երբ Թագաւորին մոից օրն՝ ի քաղաքիս միջնադարեան ապատական մեծ հանդէս մը տեսի ունեցաւ, որուն զգեստուց ճոխութիւնն և բանուածքն եզական և չնաչխարհիկ տեսիլ մ՝ընծայեցին։ Կարծես գեռ ևս կ՝անցնին աչացս առջև, խաչակրաց գունդքն, ձիաւորք և վանանափակ ասպետք, Ի.Ա.–Ի.Ա. դարուն համազգեստուքն՝ ոսկեթել վիրարկուք, և ոսկեփայլ սաղաւարտիք, հրամատուք հաւատացեալ բանակացն՝ ամէն ազգէ և աչխարհէ ժողովեալք իրենց յատուկ զգեստուքն, մանկաւիկք և գեռահասակ ապաստարկուք իշխանացն, իրենց սարկիկ գունագոյն հանդերձիք և թեթև գգակաւն վարսագեղ խոպոպեաց վրայ հանգչած, ոսկեկազմ ասպաստանիկ ձիոց վրայ հեծած, սուր և կամ գեղարդն՝ ի ձեռին՝ Սուրբ քաղաքին ազատութեան համար դիմելով, յառաջելով գունդագունդ փառացի և ահագին կառաց առջև, յորում՝ Հաւատքն իւր յաղթական մուտքը կը գործէր՝ ի Սուրբ քաղաքն։ Հարիւրաւոր աղջկունք՝ թեատարած հրեշտակաց կերպարանօք պար առած էին եօթնկարգեան ամպածրար բեմի մի վրայ, որոյ ծայրն թագուհի մը սպիտակազգեստ՝ քնար մը և հոր՝ ի ձեռին՝ անուշ ծաղկանց թերթիկները կ՝ընդունէր՝ ի պաշտօն և՝ ի յարգութեան նշան,

Շատ իսկ աչխարհածանօթ է Մալինի համբաւն. ինչպէս նաև Պելճիոյ յախճապակիքն և պղնձագործ կերտուածքն. իւր կառագործութեան ցոյցին մէջ կը փայլի երկաթի և քառուսի ուղնուկանաց կոսք մը, որոյ նմանութիւնն թերևս չուշանայ երևան գալու սահմանակից աչխարհաց մէջ։ Բաց աստի հռչակաւորք են նորա երենոսի քանդակքն, Dammam և Washer գործատանց փայտէ կերտուածքն, բրդեղէնքն և մանուածքն, կապոյտ Թաւշի և մուշտակաց հանդէսքն, որոց սրահին սիւնքն վերուստ՝ ի վայր մորթապատ՝ թէ և ոչ գեղանի՝ զէթ տարօրինակ տեսիլ մը կ՝ընծայեն աչաց։ Ընդարձակ խորանաձածկի մը տակ՝ զինուորականաց ատեան մը գումարուած է, յոր զինուորութեան ամէն աստիճանն խումբ մը արձանօք կերպարանեալ յերևան կ՝ածէ Պելճիոյ զօրաց համազգեստն և զէնքերն. անոր մօտ որսոյ զինուց և դաշտոյնից հանդէսն է։ Կանկ կ՝առնում Անվերբա քաղաքին նաւահանգստին մեծ յատակագծին առջև, որ մանրամասնօրէն կը պարզէ այցելուին աչաց առջև այդ եզական և վաճառաշաչ նաւահանգստի օգտաւէտ գիրքն և բացումն, ընդ որ ականատես լինելով զարմացայ՝ իմ անդրը երիցս ուղևորութեան ժամանակ։

Այս սրահէս՝ ի պարտէզն հանող դուռն կը ցուցընէ՝ ի հանդիպոյ գալարաշարդ ճեմելեանց մէջ կղզիացեալ շէնք մը՝ կղմնտրէ և՝ ի կապոյտ քարանց, և կճէիւք զարդարեալ. հոս Auberth հանդէսն է՝ իւր գեղեցիկ արձանաք, յախ-

digitised by A.R.A.R.@

ճառայկօքն և Solvay գործատան հոգէ անօթքն։ Ի ճախմէ՝ Ջնարակեալ սոսի փայտէ չէնքի մը մէջ Mariemont և Bascoupի հանքաց հատաքում մը կայ, յորում պեղմանց ծառայող ամենայն գործիք և աշխատութեանց եղանակն 'ի ցոյց դրուած է. ակնպէս հողմատար, փորիչ, մաղող, ջրիչ գործիք, ածուխն լուացող Feldspathի աւազանք և 'ի մեռաղս բանողներն իջնցնող և վեր հանող գործիներն։ Փիչ մ'անդին ծխախոտի գործատանց ագնիւ և նրբաթել ոսկեգոյն ծխախոտն, Անվերջոտ քաղաքին զտարանաց ըմպելիքն և գարեջրոյ ընդունարանքն։ Ոսկի երկաթեղենաց մասն՝ բաւական է 'ի վկայել այս աշխատաւոր և հարուստ երկրին գործունէութիւնը։

Իւր դրացի և գոյնչափ արուեստագէտ երկիրն Ստորին Ղահանգն՝ ոչ նուազ տեղ բռնած է։ Պլէճիոյ սահմանակից՝ ուզած է ևս լինել իւր դրացին այս Համազգային մրցաբանին մէջ։ Իւր չէնքի ճարտարապետութիւնն իր վերանորոգման դարը կը ցուցնէ։ Ընդարձակ դուռ մը Համաչափ չորս պատուհանք 'ի սրուչ մի կը մոցընեն, որոյ որմունքն ամբողջովին կերպասներով ծածկուած են, երկուստեք խորշերու մէջ զետեղուած են Delftի գործատան հրաշակերտ մեծ անօթք, ձեղունն Willy Wartensի վրձնաւ դիցաբանական մեծ նկարուք զարդարուած է։ Այս օրահիս մէջ Ստորին Ղահանգն միացուցած է 'ի մի վայր իւր բարգաւաճագոյն ձեռագործքն. Eventerի արքունական գորգոց և կապերտից գործատունն իւր հին գորգերուն համբաւաւոր նմանութիւններ բերած է. այս գորգերս որ կատարեալ արուեստով շինուած են և ճոխ նկարներ կ'երևցնեն, տասն հարիւրորդաչափ հաստութիւն ունին։ Կուգայ յետոյ Delftի աշխարհածանօթ գործատունն իւր համբաւոյն արժանաւոր տեղ մի բռնելով Արիսեան դաշտին մէջ. կառաւգործութիւնն՝ Պէլճիոյն հաւասար, գիւնեգործութիւն և օղեաց տեսակքն ընդարձակ սենեակներ բռնած են, որոց մին համակ շիշերով զարդարուած ունի 'ի միջավայրն աշտարակ մը սոսկ 'ի շիշէից կազմուած պէսպէս ձևով իրարու վրայ դիցած։ Ցայսգրութիւնն՝ իւր գեղեցիկ հանգիսիւն կը ցուցանէ զայս ազգ ոչ միայն վաճառական և արուեստագէտ, այլ և գրագէտ և ուսում նասէր։

Այլ թերևս երկրիս եզական և ճոխագոյն հանգէսն ըլլայ իւր ադամանդ բանելու ցոյցն։ Պարտիզին մէջ կղզիացեալ պուսատիկ մը կ'ամբառնայ ազիւսէ և քարէ շինուած հաճոյատեսիլ ճարտարապետութեամբ. անոր արտաքին երեսն կը զարդարեն Delftի յախճապակեայքն և 'ի ներքս թափծու երկաթէ դրասանեներ. որմոց եզերքը ագուցուած խորշք և ապակեփակ դարանք՝ համապատասխանող շէնքի ճարտարապետութեանն միլիոնաւոր արժողութեամբ ադամանդ կը բովանդակեն։ Ի միջավայրի զանազան սեղանոց վրայ երկանաբարք դրուած են, որոց երագներնեաց շարժումն հաղորդուած է իրենց կազաչարժ գործիքէ մը. մերձաւոր դարան մը աննման և տձև քարեր կը բովանդակէ, որոնք մին 'ի գործածուցաց առնելով 'ի ձեռին՝ երկանաբարանց վրայ կը բանի աչագէ առջև մեծաւ փութկութեամբ. այս քարն հետզհետէ ձևաւորուելով և իւր խոշոր երեսոյթն թողլով, յանկարծ անգին ճառագայթ մի կ'արձակէ, որոյ արժէքը կը կրկնապատկեն՝ իւր փայլումն հանդերձ՝ բրիլանիստ երեսներն։ Զանազան եղեկտրական զանգակահարք՝ հրշիջոյց զօրաց պահակատան և պահապան ոստիկանութեան տան հետ կը կապակցեն այս զանձարանս՝ որ և իցէ արկածէ ազատելու համար։

Փիչ մ'անդին, սոյն երկիրս իւր տնկաբանական և սննդական բերքն 'ի տես դրած է առանձին փայտակերտի մը մէջ. կայ ևս ախոռ մը՝ վերջին նարաբգիւտ կատարելութեամբն, որով կենդանեաց և անասնոց վրայ ունեցած փոյ-

digitised by A.R.A.R.@

թընկը ցուցուի, և որ այնչափ անուանի ըրած է այդ երկիրը իւր կաթնատու անասնովքն։ Հոլանտացի մեծ հացագործ մը իւր փուռն աստ 'ի ցոյց դրած է, որով հացն այլ ոչ ևս մարդուն գիշերային անքուն և աշխատեցուցիչ ձեռաց գործն է, այլ ինքնագործ մեքենայիւք կը շինուի այսուհետև։

Սորին Նահանգն ունի ևս իւր ընդարձակ հարկատու երկիրներն։ Հընդիկ ճարտարապետութեամբ շէնք մ'է, որուն սենեակքն Հնդկաստանի կերպասներով ծածկուած են. գլխաւոր սրահին միջավայրն յաղթական սիւն մը ամենազգի զինուք և երաժշտական գործեօք զարդարուած է։ Վարագուրաձիգ պատուառօք խորանածածկի մը տակ Պաթաւիոյ թանկագինութիւնքն 'ի տես դրուած են, աստ և անդ դարաններու վրայ տեղացի զէնքեր իրենց ճոխ քանդակներով և փորագրութեամբն կը ցուցուին քեզ հանդերձ ջերմին և արգասաւոր երկրի մը ամենայն բերքերովն և գործածքներովն, որ հետզհետէ կը պարզուին այցելուին աչաց առջևն։

Տարուճակեկի։

Հ. ԳԷՈՐԳ ՊԱՑԵԱՆ

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ՍԻԴԱՑ*

ԸՆԴԴԷՄ ԱՐԱԲԱՑ

Ընդ իս զունդս այս յառաջ խաղայ ռազմիկ վառելոց,
Եւ 'ի դէմըն խիզախ վըստահութեան փայլէ կնիք։
Հինգ հարիւր 'ի մեկնելս անդ, այլ անկարծ օգնութեամբ՝
Խումբ երից հազարաց՝ հասաք յանքոյթ նաւակայսն.
Այնքան ընթացիցս այսգոյն՝ դիմացս այս տեսիլ՝
Ի լանջս անդ լըքելոց վատաց վառեաց զարութիւն։
Զերկուս մասն 'ի յերից՝ այն ինչ հասեալք անդանօր՝
Ի խորըս թագուցի նաւուց անդէն դիպելոց.
Մնացեալքըն՝ որոց թիւ ըստուարանայր ժամ 'ի ժամ,
Գետնամածք առ ինև և անշըշունչք տարածին,
Եւ 'ի հուր եռանդնաբորբ անձոյժ ոգւոց տոչորեալք,
Ի յանդ հանեն ըզմեծ զայն կէս չըքնաղ գիշերոյն։
Անդ 'ի ձայն հրամանացս՝ յառաջապահն իսկ ջոկատ
Նոյնգունակ թագուցեալք՝ կան կեղծ հնարիցս ի սատար.
Զի յանդուգըն խորհըրդով իմ զերդ 'ի քէն ընկալեալ՝
Քարոզել և յինէն առ նոսա՝ տամ զայն պատուէր։
Նըշոյլք աղօտափայլ հուսկ յաստեղաց կաթելոց՝
Երեսունս՝ ընդ ջուրցն յորդել՝ ցուցին աչացս առագաստ։

*Դոն Ռոտրիկ՝ անուանեալն Սիդ, պատմէ առ Դոն Փերնանդ, արքայ Կաստիլիոյ յաղթութիւն իւր զոր տարաւ ընդդէմ Արաբաց (յամին իբր 1060)։

digitised by A.R.A.R.@